ճառականներու հմտութեան մասին կը խօսի։1)

Ես հոս կտոր մը կ՚արտատպեմ՝ ճաշակ մը տուած ըլլալու համար այս շահեկան հրատարակութեան մասին, զոր կ՚արժէ ուսումնասիրել.

«Լիդօրնայ քաղաքում ճոթն խարջ այ փոքր՝ թազայ թազայ կու ծախվի, այսպէս՝ մուխիարն եւ սօֆն, ապրիշումն զտրովն կու ծախուի, հարիւրին 4 դարայինք կառնուին։ Ալիշվերիշի փողն ջուլի այ. 9 ջուլին մին կորենթ մարշիլ է, որ է 72 դրացի հարիւր. դիտր ապրիշումին նազարաթանայ կառնուն. հակին մին մարշիլ տօվանի. զտրին կէս մարշիլ, նօվը յինք կառնուն, մի կօրէնթ մարշիլն 69 դրացի է. վախտի դէօրայ՝ հարիւրին 2, 3, 4, 5, աւելի սարաֆն է Քէվանդու դրամոնին, լաջվարդն, բեխի սումբուլն, սօֆի մանածն, մահմուդին՝ մերջանն քահրիբարն՝ ղըրմըզն՝ եւ սոցին նմա ապրանք զտրով կու ծախեն, մաջին օնցով, բուրդն՝ բամբակէ մանածն եւ մեղրամոմն զանթարով կու ծախեն։ Վենետիկու ալիշվերիշն Լիդօրնու պես այ. ապրէշումի ահվալն այս է. Ղադիմի սովորություն է կապազ ենար ապրէշումն լիտրէն 48 դրուշէթ՝ որ է 2 կորէնթ դուկատ, թէ թանդ է ենար ապրէշումն՝ դարէն փոքր այ, թէ աժան է, դարէն շատ է։ Միւս ապրէշումիցն վախտին դեօրայ՝ դահ ավել՝ դահ փոքր թանկ ու աժան։ Ալիշվերիշի փողը շատն կրուշէթ այ»։ (էջ 41–42)

Ահա ե՛ւ իմ թարգմանութիւնը.

«Լիվօրնիա քաղաքին մէջ լաթ քիչ կը ծախուի, նոր նոր (տեսակ) կը ծախուի, օրինակ. մուխիար եւ սօֆի (հիւսուածեղէնի տեսակներ)։ Մետաքսը լիտրով կը ծախուի։ Ծանրութեան հարիւրին չորս կ՚առնեն։ Առեւտուրի դրամը ջուլի կը կոչուի։ 9 ջուլին մէկ կորէնդ մարշիլի հաւասար է, որ կ՚ընէ 72 դրացի։ Մետաքսի հարիւր լիտրին մաքրանոցին սակը։ Մաքստան (մետաքսի) մէկ հակին մարշիլ մը կ՚առնեն, լիտրին կէս մարշիլ, իսկ նօվին հինք կ՚առնեն։ Մէկ կորէնդ մարշիլը ատենուան համեմատ 69 դրացի է։ Դրամափոխին սակը հարիւրին 2, 3, 4, 5 կամ աւելի է։ Քէվանդու դրամոնին, լաջվարդն է, բեխի՝ սումբուլն, սօֆի՝ մանածը, մահմուդին՝ բուսաը, սաթը, որդանը եւ սոնց նման ապրանքները լիտրով կը ծախեն, մաջին առնսով, բուրդը, բամպակէ մանածը, մեղրամոմը կըշիռով կը ծախեն։ Վենետիկի առեւտուրը Լիվօրնոյինի նման է, մետաքսին վիճակն այս է։ Սպասարկութեան սովորութեան համաձայն, կապած ենար մետաքսի լիտրին կ՚առնեն 48 դուրուշէթ, որ հաւասար է 2 կորէնդ դուկատի։ Եթէ ենար մետաքսը սուղ է, հանողէքը քիչ է, եթէ աժան է, հանողէքը՝ շատ։ Միւս մետաքսներուն՝ ժամանակին համեմատ, քիչ աւելի, քիչ պակաս, սուղ կամ աժան։ Առեւտուրին դրամը մեծ մասամբ կրուշէթ է»։

* * *

Ամերիկայի մէջ ալ հայերը եղած են մետաքսի արտադրութեան եւ շերամաբուծութեան գլխաւոր գործիչները։ Իրաւ է, որ Քօրդէզի օրերէն սկսեալ, փորձեր եղած են, օրինակ, Մէքսիքոյի մէջ շերամապահութեան։ Առանք, սակայն, գոհացուցիչ արդիւնք մը չեն տուած։

Վիրճինիայի Անգլիական գաղութին մէջ ալ շերամապահութեան կարեւորութիւնը նկատի առնուած է։ Այս գաղութն ունէր առատ ծխախոտ, որուն դէմ, սակայն, շատ մը արգելքներ կային Եւրոպայի մէջ։ Նոյնիսկ Անգլիական թագաւորները չէին քաջալերեր ատոր արտադրութիւնը։ Եւ Ժէ. դարուն գաղթային կառավարութիւնը կը թելադրէր լքել ծխախոտի մշակութիւնը եւ մետաքսի արտադրութիւնը դարգացնել։ Կային ե՛ւ պատժական միջոցներ՝ այս թելադրութիւնը պարտադրելու համար։ Նոյն ատեն թթենիներու տնկուիլը եւ թթաստաններու մշակութիւնը պարտաւորիչ էր, չգործակցողներուն տուգանքի պատիժ կար։ Այնքան բուռն էր մետաքսի արտադրութեան պետական այս ճիգը, որ երբեմն մէկ փաունտ մետաքս արտադրողին 50 փաունտ ծխախոտ կը տրուէր իբր վարձք։

Բնական է, որ այսքան ցանկութեան եւ

1) «Պատ. Նոր Ջուղայու, էջ 164–165։